

Լիզինգը համարվում է երկարատև վարկավորման ձևերից մեկը, երբ վարձակալության են տրվում հիմնական միջոցներ, սարքավորումներ, մեքենաներ և այլն: Վերջին տարիներին Հայաստանում լայն տարածում են ստացել լիզինգային գործառնությունները, որոնք հաջողությամբ իրականացվում են ինչպես հանրապետության առևտրային բանկերի, այնպես էլ նորաստեղծ լիզինգային ընկերակցությունների կողմից:

Գոյություն ունեն լիզինգային գործառնությունների բազմաթիվ տեսակներ, որոնք միմյանցից տարբերվում են ըստ մասնակիցների կազմի, ունեցվածքի տիպի, վարձակալության ժամկետների, փոխհատուցման (ետ գնման) ժամկետների, ծառայությունների ծավալի և այլ հատկանիշների:

Ըստ մասնակիցների կազմի տարբերում են.

- ուղղակի լիզինգ, որի դեպքում ունեցվածքի սեփականատերը (մատակարարը) ինքնուրույն կերպով, առանց միջնորդների, տվյալ օբյեկտը լիզինգ է տալիս, այս դեպքում կոչվում է երկկողմանի գործարք,

- անուղղակի լիզինգ, երբ ունեցվածքի վարձակալության հանձնումը տեղի է ունենում միջնորդի (կամ միջնորդների) միջոցով, դրանք կարող են լինել նաև լիզինգային ֆիրմաներ կամ բանկեր, այս դեպքում կոչվում է բազմակողմանի լիզինգ:

Լիզինգը իր մեջ ներառում է վարկավորման հիմնական սկզբունքները, վերադարձնելիությունը, ժամկետայնությունը և վճարովիությունը, բացի վարկի տոկոսադրույքից լիզինգառուին լիզինգատուին վճարում է կոմիսիոն հավելավճարներ (պարգևատրումներ)՝ նրա կատարած ծառայության դիմաց:

Ըստ ունեցվածքի տիպի տարբերում են

- շարժական գույքի լիզինգ,
- անշարժ գույքի (հիպոթեկա) լիզինգ,
- նախկինում օգտագործված գույքի լիզինգ:

Ըստ ունեցվածքի փոխհատուցման աստիճանի լինում է.

- լիզինգ՝ լրիվ ետգնմամբ, երբ լիզինգային պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում վարձակալված ունեցվածքի արժեքի լրիվ վճարում լիզինգատուին:

- լիզինգ՝ ոչ լրիվ ետգնմամբ, երբ լիզինգային պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում վարձակալված ունեցվածքի արժեքի մասնակի վճարում լիզինգատուին:

Ըստ ունեցվածքի փոխհատուցման աստիճանի տարբերում ենք լիզինգի հետևյալ տեսակները.

ա. օպերատիվ լիզինգ, որի դեպքում լիզինգային պայմանագրի գործողության ժամկետը ավելի կարճ է, քան ունեցվածքի ծառայության տնտեսական ժամկետը, հետևաբար, այն ոչ լրիվ ամորտիզացիայով և փոխհատուցմամբ լիզինգ է,

բ. ֆինանսական լիզինգ, այն լրիվ փոխհատուցմամբ լիզինգ է, այս դեպքում վարձակալության ժամկետը համընկնում է ունեցվածքի լրիվ ամորտիզացիայի ժամկետի հետ:

Շուկայի հատվածներից (սեկտորներից) կախված, որում իրականացվում են լիզինգային գործարքները, տարբերում են.

- ներքին լիզինգ, երբ բոլոր մասնակիցները միևնույն երկրից են,

- միջազգային լիզինգ, երբ մասնակիցներից գոնե մեկը մեկ այլ երկրից է (ներկայացնում է ուրիշ պետություն):

Որո՞նք են լիզինգի առավելությունները:

1. Լիզինգը հնարավորություն է տալիս օգտագործել սարքավորումը առանց նրա լրիվ արժեքը վճարելու, այսինքն՝ կազմակերպել նոր արտադրություն՝ առանց անհրաժեշտ խոշոր ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման, իսկ միջազգային լիզինգի դեպքում նրբացվում է արտադրության միջոցների խնդիրը:

2. Սարքավորումը փորձարկելու հնարավորությունը՝ մինչև նրա լրիվ վճարելը,

3. Սեզոնային սարքավորումը օգտագործելու հնարավորությունը միայն այն ժամանակաընթացքում, երբ այն անհրաժեշտ է:

4. Լիզինգին ներկայացվող սարքավորման գնումը օպտիմալ շուկայական գներով: Չէ՞ որ, ոչ միայն լիզինգատուն, այլև լիզինգատուն շահագրգռված են սարքավորման գնի իջեցման մեջ:
5. Չի ներգրավվում փոխառու կապիտալը: Լիզինգը չի «ծանրացնում» (ծանրաբեռնում) ձեռնարկության ակտիվները և օգնում է օպտիմալ հարաբերակցություն պահպանել սեփական և փոխառու կապիտալի միջև:
6. Ապրանքին ուղեկցող ծառայությունների լայն սպեկտրը ձեռք բերված սարքավորման մոնտաժման և սպասարկման գծով:
7. Լիզինգային վճարումների իրականացման առավել ճկուն կարգը: Վարձակալողը ինքն է մասնակցում գործարքի կնքման գործընթացին, լիզինգային համընկերության (կոմպանիայի) հետ համատեղ որոշում է ֆինսանսավորման հիմնական պայմանները, վարձակալության ժամկետը և գումարը, լրացուցիչ ծառայությունների ծավալը, վարձակալական վճարների պարբերականությունը, կայունացված (ֆիքսավորված) կամ էլ լողացող տոկոսադրույքը, մատակարարից լիզինգի օբյեկտի գնման պայմանները և լիզինգատուի հետ հաշվարկների պայմանները:
8. Լիզինգային վճարները կարող են իրականացվել վարձակալված սարքավորման կողմից արտադրված արտադրանքի իրացումից ստացված հասույթից ոչ միայն դրամական, այլև ապրանքային ձևով (փոխհատուցվող՝ կոմպենսացիոն լիզինգ):
9. Հարկային առավելությունները: Նախ, լիզինգային գործարքում սարքավորման օգտագործողի վարձակալական վճարը վերաբերում է շրջանառության ծախսերին և համապատասխանաբար իջեցնում է (պակասեցնում է) հարկվող շահույթի չափը, նշանակում է նաև հարկման չափը, որը վճարվում է բյուջե: Երկրորդ, որպես կանոն, հարկային օրենսդրությունը լիզինգային գործարքների համար նախատեսում է ամորտիզացիայի արագացված համակարգ, այսինքն, լրացուցիչ հարկային արտոնություններ ոչ միայն վարձակալողի, այլ նաև վարձակալվողի համար:
10. Լիզինգը վարձակալողին ազատում է գույքի տնօրինման հետ կապված ծախսերից, քանի որ նրա իրավական սեփականտերը հանդիսանում է վարձակալության տվողը:

11. Վարձակալողի համար շահավետ պայմաններ, որոնք բխում են լիզինգի պայմանագրի ժամկետը ավարտվելուց հետո՝ նրան հնարավորություն տալով գնելու այդ սարքավորումը մնացորդային արժեքով:

12. Արտադրող ֆիրմաների համար լիզինգը ընդլայնում է նրանց արտադրանքի իրացման հնարավորությունները: Բավական է միայն մշել, որ IBM ֆիրման իր արտադրված արտադրանքի ավելի, քան 80 %-ը իրացնում է լիզինգի միջոցով:

13. Լիզինգը ամորտիզացիոն արտոնությունների հետ համատեղ նպատակաուղղված է արտադրության տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացման արագացմանը, իսկ մշանակում է և ազգային տնտեսության արդյունավետության բարձրացմանը բոլոր բաղկացուցիչների հետ միասին վերցրած (աշխատանքի արդյունավետության, ռեսուրսատարության, կապիտալատարության, արտադրանքի որակի, կապիտալի շրջապտույտի արագացման):

Լիզինգային գործարքի նախապատրաստման համար անհրաժեշտ է անցնել մի շարք փուլեր:

I փուլ

- լիզինգատուի դիմումը լիզինգատուին անհրաժեշտ սարքավորումը գնելու համար,
- լիզինգատուի եզրակացությունը ստացողի վճարունակության մասին և լիզինգային նախագծի արդյունավետության մասին,
- լիզինգատուի պատվեր - կարգագիրը մատակարարին,

II փուլ

- ձևակերպվում է վարկային պայմանագիրը լիզինգատուին վարկը տրամադրելու մասին՝ սարքավորումը գնելու համար,
- սարքավորման առք ու վաճառքի պայմանագիրը,
- լիզինգատուի կողմից սարքավորումը շահագործելու վերաբերյալ ընդունման ակտը,
- լիզինգային համաձայնագիրը,
- սարքավորման տեխնիկական սպասարկման մասին պայմանագիրը և սարքավորման ապահովագրության մասին պայմանագիրը:

III փուլ

- Իրականացվում է լիզինգային վճարումները:
- Լիզինգային համաձայնագրի ժամկետը ավարտվելուց լուծվում է ունեցվածքի հետագա օգտագործման հարցը (վերադարձվում է այն լիզինգատուին, երկարաձգվում է լիզինգային համաձայնագրի գործողության ժամկետը, կամ էլ վաճառվում է այն լիզինգատուին):

Լիզինգատուի և լիզինգառուի միջև հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթ է հանդիսանում լիզինգի մասին պայմանագիրը:

Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը իր մեջ պարունակում է հետևյալ բաղկացուցիչները. ամորտիզացիոն հատկացումները, վարկային ռեսուրսների դիմաց վճարված տոկոսները (լիզինգատուի լրացուցիչ ծառայությունների համար), կոմիսիոն պարգևատրումները և ավելացված արժեքի հարկը, որը լիզինգատուի կողմից մուծվում է Պետ. բյուջե:

ա. Լիզինգային վճարումների հաշվարկը ֆինանսական լիզինգի պայմաններով՝ լրիվ ետ գնմամբ (փոխհատուցմամբ):

Լիզինգային համաձայնագրի պայմանները.

Սարքավորման արժեքը10.000 հազ. դրամ:

Նրա լրիվ ամորտիզացիայի ժամկետը.....5 տարի:

Ամորտիզացիայի տարեկան նորման.....20 %:

Լիզինգի ժամկետը..... 5 տարի:

Վարկի տոկոսադրույքը..... 5 %:

Կոմիսիոն պարգևատրման չափը..... 3 %:

Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) դրույքաչափը..... 20 %:

Ամորտիզացիոն հատկացումների (դուրսգրումների) հավասարաչափ համակարգի դեպքում տարեկան ամորտիզացիայի չափը կկազմի 10.000

հազ. դր. $\times \frac{20}{100} = 2.000$ հզ. դրամ: Սակայն, վարկի տոկոսի, կոմիսիայի և ԱԱՀ-ի

չափերը կախված են սարքավորման-մնացորդային արժեքից: Այդ իսկ պատճառով էլ սարքավորման միջին տարեկան արժեքի հաշվարկը ցույց տանք ներքոհիշյալ աղյուսակում (հինգ տարվա համար):

Աղյուսակ 4

Սարքավորման միջին տարեկան արժեքի հաշվարկը

(հզ. դրամ)

Ժամանակա- շրջանը	Սարքավորման արժեքը տառեսկզբին	Ամորտիզա- ցիայի տարե- կան գումարը	Սարքավորման արժեքը տարեվերջին	Սարքավորման միջին տարե- կան արժեքը
1-ին տարի	10.000	2.000	8.000	9.000
2-րդ տարի	8.000	2.000	6.000	7.000
3-րդ տարի	6.000	2.000	4.000	5.000
4-րդ տարի	4.000	2.000	2.000	3.000
5-րդ տարի	2.000	2.000	—	1.000

Առաջին տարում լիզինգային վճարումների ընդհանուր չափը կկազմի.

Ամորտիզացիոն հատկացումները2000 հզ. դր.

$$\text{Վարկի տոկոսը} \dots\dots\dots \frac{9000 \times 5}{100} = 450 \text{ հզ. դր.}$$

$$\text{Կոմիսիոն պարգևատրումները} \dots\dots\dots \frac{9000 \times 3}{100} = 270 \text{ հզ. դր.}$$

Լիզինգային գործարքից ստացված հասույթը, որը ենթակա է հարկման
ԱԱՀ-ով..... $450+270=720$ հզ. դր.

$$\text{ԱԱՀ} \dots\dots\dots \frac{720 \times 20}{100} = 144 \text{ հզ. դր.}$$

Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը կկազմի.

$2000+450+270+144=2864$ հզ. դրամ:

Նմանատիպ ձևով կատարվում է նաև լիզինգային վճարումների
հաշվարկ հաջորդ տարիների համար: Վերջիններս ներակայացված են
ներքոհիշյալ 5 աղյուսակում:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, լիզինգային վճարումների
հաշվարկը հինգ տարվա համար կազմում է 12.400 հզ. դրամ: Կախված
լիզինգատուի և լիզինգառուի ֆինանսական դրույթունից և նրանց միջև
փոխադարձ պայմանավորվածությունից, վճարումների գրաֆիկը (ժամանա-
կացույցը) կարող է լինել դեգրեսսիվ (ինչպես դա տեղի ուներ բերված
աղյուսակում), հավասարաչափ կամ էլ պրոգրեսիվ (աճողական):

Լիզինգային վճարումների ընդհանուր չափը ըստ տարիների (հազ. դրամ)

Ժամանակա- շրջանը	Ամորտի- զացիոն հատկա- ցումներ	վար- կի տոկոսը	Կոմիսիոն պարգևա- տրումներ	ԱԱՀ-անը ենթակա հասույթը	ԱԱՀ	Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը
1-ին տարի	2.000	450	270	720	144	2864
2-րդ տարի	2.000	350	210	560	112	2672
3-րդ տարի	2.000	250	150	400	80	2480
4-րդ տարի	2.000	150	90	240	48	2288
5-րդ տարի	2.000	50	30	80	16	2096
Ամբողջը	10.000	1250	750	2.000	400	12.400

բ. Լիզինգային վճարումների հաշվարկը օպերատիվ լիզինգի պայմաններով՝
սարքավորման ետ գնման իրավունքով:

Վերցնենք նույն ելքային տվյալները, ինչ որ ֆինանսական լիզինգի դեպքում էր, միայն այն տարբերությամբ, որ սարքավորման ամորտիզացիայի ժամկետը կազմում է ոչ թե հինգ, այլ տասը տարի:

Այդ դեպքում լիզինգային պայմանագրի գործողության ընթացքում սարքավորման միջին տարեկան արժեքը կկազմի (տես աղյուսակ նո. 6):

Առաջին տարում լիզինգային վճարումների ընդհանուր չափը կկազմի.

Ամորտիզացիոն հատկացումներ.....1000 հզ. դր.

$$\text{Վարկի տոկոսը} \dots\dots\dots \frac{9500 \times 5}{100} = 475 \text{ հզ. դր.}$$

$$\text{Կոմիսիոն պարգևատրումներ} \dots\dots\dots \frac{9500 \times 3}{100} = 285 \text{ հզ. դր.}$$

Լիզինգային գործարքից ստացված հասույթը, որը ենթակա է հարկման ԱԱՀ-ով՝ $475+285=760$ հզ.դր.

$$\text{ԱԱՀ} \dots\dots\dots \frac{760 \times 20}{100} = 152 \text{ հզ.դր.}$$

Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը կկազմի.

$$1000+475+285+152 = 1912 \text{ հզ. դրամ}$$

Աղյուսակ 6

Սարքավորման միջին տարեկան արժեքի հաշվարկը

(հազ. դրամ)

Ժամանակա- շրջանը	Սարքավորման արժեքը տարեսկզբին	Ամորտիզա- ցիայի տարեկան գումարը	Սարքավորման արժեքը տարեվերջին	Սարքավորման միջին տարեկան արժեքը
1-ին տարի	10.000	1.000	9.000	9.500
2-րդ տարի	9.000	1.000	8.000	8.500
3-րդ տարի	8.000	1.000	7.000	7.500
4-րդ տարի	7.000	1.000	6.000	6.500
5-րդ տարի	6.000	1.000	5.000	5.500

Նմանատիպ ձևով կատարենք լիզինգային վճարումների հաշվարկ և հետագա տարիների համար: Ներկայացված է այն ներքոհիշյալ աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Լիզինգային վճարումների ընդհանուր չափը հինգ տարիների համար

(հազ. դրամ)

Ժամանա- կա շրջանը	Ամորտի- զացիոն հատկա- ցումներ	Վարկի տոկոսը	Կոմիսիոն պարգևա- տրումներ	ԱԱՀ-անը ենթակա հասույթը	ԱԱՀ	Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը
1-ին տարի	1.000	475	285	760	152	1912
2-րդ տարի	1.000	425	255	680	136	1816
3-րդ տարի	1.000	375	225	600	120	1720
4-րդ տարի	1.000	325	195	520	104	1624
5-րդ տարի	1.000	275	165	440	88	1528
Ամբողջը	5.000	1875	1125	3000	600	8.600

Սարքավորման մնացորդային արժեքը կազմում է 10.000 – 5.000 – 5.000 հզ. դր.: Հենց այս արժեքով էլ լիզինգառուն կարող է ետ գնել տվյալ սարքավորումը լիզինգատուից որպես իր սեփականություն: